

կարելի է առարկել՝ որ բանասէրները Պրօրոս կայսրի դաշնագրութիւնը ստոյդ են համարել, Վոպիս-էս-ի վկայութեան վրայ հիմնուելով (Vopiscus. Probus. 17.).

Յ. Մ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԵԼՆԵՐԸ

Մ. Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ո Ւ

ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵջ

(ՔՆՆԱԴԱՑՈՒԹԻՒՆ Եւ ՌԱՍՈՒԱՆՔ)

(Եարունակուրիւմ) *

Ե.

ՀԱՅԿ ԱՌԱՋԵԼԸ

Առասպելի կապուելն աշտարակաշինութեան նետ.—թէ այդ հին ժողովրդական զրոյցն ինչպիսի կերպարանք է ունեցել՝ զրծուար է ասել Մեր ունեցածը զրական մրշակութիւն կրտծն է։ Աւելի ևս գժուար է ասել այժմեան միջացներով, թէ արդեօք հենց ժողովրդի մէջ հայ ազգի ծագումն այդ հայկ հասկայի անուան հետ կապուած է եղել, թէ ժողովրդական զրոյցից օգտուազի սեպհական զիւան է այդ Յամենայն գէպս զրովի մատրշատ պարզ կերպով երկում է յատկապէս հայ ազգի ծագման հնութեան և աշտարակաշինութեան հետ կապուած լինելու նըկատմամբ։

Ազգերի և լեզուների սկիզբն աշտարակաշինութեան հետ էր կապում ժամանակի հասկացողութեամբ՝ սուրբ Գրքին հետեւլով։ Խորենացին և այդպէս է փարում իւլ մեկութեան մէջ պարսից ազգի սկզբնաւորութեան և Բիւրասպի մասին խօսելիս «Ասացեալն ի նոցանէ Բիւրասպի Աժգահակոյ՝ առ Ներըութեալ նախնի նոցա։ Քանզի ի բաժանել լեզուացն ընդ ամենոյն երկիր ողիսաւորք և ցեղապեաք որոշեալք զիւրա-

քանչիւր սահմանս ժառանգեցին ։ Սա (Բիւրասպ) զցեղապետութիւն ազգին իւրոյ ունէր հնազանդեալ ներըութայ» (Ա. Գրքի բ. յաւելուած)։

Սոյնպիսի մի շինովի բան է, հարկաւ, հայոց ազգի ծագումն աշտարակաշինութեան հետ կապելը։ Եւ, ինչպէս երկում է, Խորենացու արածն է այդ։ Նա որպէս զի այդ յերիւրումին հաւատ ընծայուի, կարեռ է համարում առաջուց յայտնել իրենից թէ Բէլը Մ. Գրքի Ներըովմն է¹)։ Բայց նա ոչ մի հիմ չունի այդ ենթադրութեան համար։ այլ գրում է լո՛ խօսքով. «Զթէլայ» առ որով նախնին մեր հայկ բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմեն։ Բայց ես ասեմ զուռնուսդ անուն եւ զթէլ Ներըովմթ լեալ»²)։

Ինչպէս երկում է, Խորենացու աղբիւրի մէջ այդ նոյնացումը չէ եղել։ Եւ այս հաւանական է թւում նաև այնու, որ Անտենունի մէջ ես, —թէպէտե Աստուածաշնչի մի քանի ձեերից ու նկարագիրներից օգտուել է զրողը, —թէլը Ներըովմթի հետ նոյնացած չէ։ Այստեղ ասած է աշտարակաշինութիւնից յետոյ. «Ի վերայ առն ընկերի³ առնոյր սուրբն Տիտան, յորում առաջին թագաւորեաց ի վերայ երկրի»։ Ուրեմն ընկերի հետ կուռում է Տիտանը, որեւ առաջին թագաւորողն է լինում երկրի վրայ, եթէ միայն «յորում» առաջին թագաւորեաց...» Հասկանանք, ինչպէս «յորում» ձեւը պահոնջում է, թէ «որի ժամանակ, այսինքն կռուի ժամանակ, առաջինը, այսինքն ընկերը, թագաւորեց»...»

1. «Յայտարուրիւն սակաւույ րկ ըստ արտապահան ասացեալ է Բէլը. ըստ ասուածային բանից ձրաւուրեամբ նարուր է» (Ա. է.):

2. Խորենացու պատմաւարանուրիւն՝ ուրայի Եղիսաբէտ բուխի հաւասար Մովսիսի, Եփեսոսու արեգակն, Կոռնոս, որ է Քամ, Քուշ, Ներըովմթ... ։ շատ շատ կարող էր, ժամանակի հասկացողութեամբ, Կոռնոսին Եղիսաբէտ ներըովմթ հնէ։ Խոկ որպէս զի Բէլն էլ Ներըովմթ հնէ նոյնանար, հարկաւոր էր զննէ, որ Կոռնոս եւ Բէլ նոյնացած լինելին։ Բայց այդ լիայ։ Հման։ Ա. է. «զթէլուով» որ է Բէլ։

3. Պ. Խալարեամբ (եր. 56) բարգմանած է յոդականի համարական տօսարապու, մինչդեռ բնագրի մէջ եղակի է բների։

Բայց ո՞վ է այդ «ընկերը», որի հետ կուռմ
է Տիտանը:

Եւսերիոսի Քրոնիկոնի մէջ աշտարակա-
շինութեան սպատմութիւնը (որից յերիւ-
րուած է Խորենացու աշտարակաշինութեան
պատմութիւնը), ինչպէս ապացուցել է պ.
Խալաթեան. I. 48 հա. II. 1 հա.) ըստ
Արիգենոսի վերջանում է. «Եւ յետ այնորիկ
կրովն ի Տիտանն մարտ պատերազմի ընդ մի-
մանս բախէին»։ Իսկ ըստ Բազմավեպի (Սի-
րիլլայից առած)։ Իսկ յետ ջրհեղեղին, Տի-
տանն և պրոմեթե լինէին, որ և Տիտանն
ընդ կրովնի ի մարտ պատերազմի զրուէր։¹
(Հմա. Խորենացի Ա. զ.՝ Արդ ի բռնա-
նակն, առէ [Սիրիլլա], Զրուանայ (Կոռոնոսի),
Ընդզիմացան նմա Տիտանն և Յապետոսթէ,
ի մարտ պատերազմի ընդ նմա զրուէլով։) Անանունի մէջ ևս Տիտան անունը Եւսերիո-
սից վերցրած է համարում պ. Խալաթեան
(II. եր. 5): Եթէ այս հետեւթիւնը ճիշտ
է, այն ժամանակ Անանունի հատուածը՝ «ի
վերայ առն ընկերի առնոյր սուրն Տիտան-
պէտք է ձասկանալ ըստ Եւսերէսի՝ այսինքն
թէ այդ ընկերը, որի հետ կուռմ է Տիտան,
կրովն (Կոռոնոս) է։ Եւ արդեօք «ընկեր» բառը
«կրովն» բառի մի աղաւազում չէ զիշագիր-
ների մէջ։

Ինչպէս էլ լինի, ըստ Անանունի, աշ-
տարակաշինութիւնից յետոյ երկու կուռող-
ներից՝ կամ «ընկերն» (կրովն?) է թագաւո-
րում։ կամ Տիտանը։ Այնուհետև շարունա-
կում է Անանուն. Եւ Բէլն Տիտաննեան ի
վեր կարծեր զինքնու…… Կարելի չէ այս Տի-
տաննեան Բէլին նոյն համարել վերեւում յի-
շած Տիտանի հետ, որ ընկերի (կրովն?)
հետ կուռմ է։ Բէլը, որի հետ կուռմ է Հայկը, «Տիտաննեան» է միայն, այսինքն Տիտա-
նի սերունդից մի թագաւոր, որ իրեն իրեւ,
աստուած պաշտել տալով գլամենայն ազգս ի
ծառայութիւն իւր կոչէրու։

Խորենացին, որովհեան. Սիրիլլայից զի-
տէ (Ա. զ.), թէ առաջին թագաւորողն ու
բռնացողն Զրուանը (=Կոռոնոս) է, որի գէմ

կուռմ է Տիտանը, և որովհեան նա, ինչպէս
տեսանք, Կոռոնոսին ու Բէլին նոյնացնում է,
ուստի և աշտարակաշինութեան պատմաւ-
թիւնից անմիջապէս յետոյ Բէլին (=Կոռոն-
ոսին) է թագաւորել և բառնալ տալիս երկրի
վրայ. Այդ անելուց յետոյ սակայն, նա մո-
ռանում է շուտով իւր արածը և հետեւ-
լով իւր աղբիւրին, Բէլին այնուհետև շարու-
նակ Տիտաննեան է կոչում, որով և ինքն իրեն
հակասում է. զի Բէլ=Կոռոնոս (=Զրուան, որի
գէմ կուռմ է Տիտան) մինում է միանգա-
մայն և Տիտաննեանայսինքն Տիտանի սերունդ։

Առասպելի ծագումը. —Պ. Գելցերը կար-
ծում է Հայկի առասպելի մէջ պահուած է
ասորական քաղաքակրթութեան, կուլտուրայի
և կրօնի հայոց վրայ ունեցած զօրեզ, սկզբում
թշնամական, ազգեցութեան պարզ յայտնի մի
յիշողութիւն։ Սակայն ագոր համարնախ պէտք
էր ցոյց տալ, որ այդ առասպելը բնիկ հայ-
կական է և հայ ժողովրդի մէջ է սկիզբն առել՝
իրեւ յիշատակ այն յարաբերութեան, որ
հայերն ունեցել են իրենց զրացի հարաւային
ազգերի հետ, որոնց աստուածն էր Բէլ Բայց
միթէ կարող չէ այդ զրոյցի մէջ մնացած լի-
նել Հայաստանի նախահայ բնակիչների։ Ուրար-
դացիների ասորեստանցոց գէմ մզած պատե-
րազմների յիշատակը, որ յետոյ հայերը ժա-
ռանգել են Ուրարդացիներից։ Յաճախ մի ազգ,
բռնելով մի ուրիշ ազգի երկիր, սեպհականում
է և սորա զրոյցներն ու աւանդութիւնները,
հարկաւ, փօփօխութիւններով։ Միւս կողմից
այդ առասպելը, քանի որ իւր նմանները շատ
ազգերի մէջ կան, կարող է նաև ուրիշ ազգե-
րից մի փօփօխութիւն լինել որ յետոյ տե-
ղափակուած է Վանայ լճի շուրջը և կապուած
Բէլ և Հայկ անունների հետ։ Ուրիշ խօսքե-
րով, այդ առասպելը կարող է պատկանել
այսպէս կոչուած թափառական զրոյցների
(Wandersagen) տեսակին։ ողոնք անցնում են
մի անձից միւսին, մի անձից միւսին մի գի-
պուածից միւսին։ զանազան ժամանակներում
կրկին պատմում են իրենց զլիաւոր բովանո-
գակութեամբ։ որոշ շափով տեղէ տեղ, ժամա-
նակէ ժամանակ թափառում շրջում են
Բնականարար այդպիսի պատմուածքները կրր-
կին ու կրկին փօփօխուցման ընթացքում բա-

¹ Եւսերի Կեսարացոյ ժամանակականի, Վենեսուելա.
1818 դր. 38 հա. եր. 53.

առկանի փոփոխութեմ են, բայց զիստար մոտիւները և հիմնական գծերը նոյն են մնում։

Երբեմն նոյն իսկ միթոսը (Mythus) թափառական զրոյցի կերպարանք է ստանում և կամ նոյն առասպելը, միթոսը մի տեղ ներկայանում է իրեւ ընիկ առասպելը մի ուրիշ տեղ իրեւ փոխառութիւն։ Այդպիսի միթափառական առասպելի, միթոսի զեղեցիկ օրինակ է Զուիցերիայի ազատութեան գործի մէջ մէծ գերխաղացոյ Տէլի զրոյցը։ Տէլի որսորդ է, և քաջաձիգ աղեղնաւոր, ինչպէս մեր Հայկը։ Նա էլ Շուէցարիա մանող բռնաւորին սպանում է իւր նետով և ազատում իւր երկիրը։ Սա նոյնպէս գարերից ի վեր երգով, խօսքով ու պատկերով փառարանում է։ Նորա անունով կան մատուռ և սարահարթ (Tellplatte)։ Բայց չնոյելով այս ամենին՝ այժմեան հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ այդ ազգային հերոս Տէլի զրոյցը Զուիցերիայում ընկի չէ, այլ ամենայն հաւանականութեամբ Դանիացի քաջն Տոկոյի զրոյցն է, որ նոյնութեամբ անցել է Շուէցարիա և այստեղ ազգային հերոս է զարձել։ Նոյն զրոյցը պատմում է, և ուրիշ տղթերի մէջ, և հիմնապէս մի հնդեւրոսպական հին զրոյց է, որ առասպելարանական միթոզիական հիմներին ունի և նոյնանում է առասպելական հսկաների որդի Լզիլի և իւր երկու եղբայրների զրոյցի հետ։ «Իսկ այդ երեք հսկաները հստաքը են զաւում հնդկական ինդրա աստուծու, որ իւր նետուրով և կայծակներով խորտակում է ամսպրոպի ու զիշերուայ զերբի (Vāmon) ամսպեզէն բռորդը, երեք զիստար մարտակիցներին։ Սկանզինաւ ական առասպելարանութեան մէջ ինդրային համապատասխան է հսկայ Օգհին աստուածը, որ իւր հնագոյն կերպարանքով նոյնպէս նետ աղեղ է բանեցնում և կռւում է ձմեռուայ ու խաւարի հսկայ բանակալերի զէմ։ Այդ Օգհինը, աստուածների և հաւանարէն մարդկանց հայր, ներկայանում է, ոչ միայն իրեւ զօրավար, որ մի զօրքի զլուխ անցած կռւում է մի ուրիշ թշնամի զօրքի զէմ։ այլ և իրեւ կատաղի որսորդ (Wilder)

(Läger), որի զերեզմանն անգամ շատ տեղ ցոյց են տալիս շատ տեղ ֆերմանիայում։ Այսպէս Տէլի զրոյցը բնութեան մի առասպել է, որ իւր հիմքն ունի այն աշխարհայեցողութեան մէջ, որ նախնական մարդիկ ունենին բնութեան երեսըների վրայ։ «Դայ լուսոյ կախւ է ընդգեմ գիշերուայ և ձմեռուայ, որը մանուկ ազգերն ըմբռնել են իրեւ մի տառուածային աղեղնաւորի կոխւ։ և այնուհետեւ բանաստեղծել շարունակելով և մարդկային կերպարանք տալով՝ դարձրել են այդ կոխւ քաջաձիգ աղեղնաւորի կոխւ իւր բռնակալ ախրոջ զէմ։ որին և աղեղնաւորը սպանում է։ Ուրիշ խօսքով առասպելը առասպելական է գարձել։

Մի տեղ այդ առասպելը բնիկ է, ամենահին, ժամանակներից ի վեր զոյութիւն ունի, մի ուրիշ տեղ, ինչպէս Զուիցերիայում։ Հաւանօրէն, փոխառութիւն է։ Մի տեղ պահել է իւր նախնական առասպելական միթոզիական բնաւորութիւնը, մի ուրիշ տեղ, ինչպէս Զուիցերիայում, պատմական գառնալով՝ աստուածների առասպելը կապուել է ազգի աղատութեան կռուի հետ և փոխուել դարձել է Տէլի հայրենասիրական գործը։

Արդ թեթեւ բաղդատութիւնից անգամ երեւում է, որ մեր Հայկի առասպելը միենոյն Տէլի, կամ Օգհինի առասպելն է։ Դա միենոյն որսորդի քաջաձիգ աղեղնաւորի կոխւն է բանակլի զէմ։ մեր առասպելի մէջ ևս կեզրոնը կազմում է քաջ նետաձգութիւնը, նետով թշնամուն սպանելը և իւր երկիրն օտար բանաւորից աղատելը։

Այս համեմատութիւնը միայն բաւական է մեզ ցոյց անլու, որ մեր Հայկի զրոյցի հիմունքը՝ լինի այդ զրոյցը մի փոխառութիւն, թէ հայոց մէջ նախաժամանակից ի վեր զոյութիւն ունեցող մի առասպել, պատմական չէ, այլ առասպելարանական, ծագած ընդհանուր առասպելարանական աշխարհայեցողութիւնից։ Յետազոյում միայն այդ առասպելը, հայերի կամ թէ նախահայերի իրենց հարաւային զբացների յատկապէս ատորեստանցուզուցէ, և Բարեկացոց հետ ունեցած

յարաբերութեան պատճառով, կրել է պատմական ազգեցութիւնն: Հին թշնամի դեկի դեմսնի տեղ անցել է Բէլը, որ Բարելարոց քաղցկացոց և ուրիշների արեգական աստուածն է, երկնքի և լուսոյ տէր, աշխարհի և մարդկանց արարիչ որ ասաղերին իրենց ձանապարհը ցոյց է տուել: Բէլ կոչումը, որ նշանակում է տէր, տրւում է և ուրիշ տառուածների և աստղների, ինչպէս և թագաւորների: Այսպէս և հնոց պատմութեամբ Ասորեսաանի թագաւորներից մէկը կոչուել է Բէլ, որ ազտեկ է Բարելանն արարների լծից, և որի որդին է համարւում Նինոս: Բայց Բէլն սկզբնապէս արեգակնային աստուածութիւնն է: Եւ եթէ ի նկատի ունենանք, որ մեր հսկայ Հայկն ևս, մի համաստեղութեան կոչում է պարզ կրյինի, որ հին առասպելը իւր այս կերպարանքի տակ զեռ ևս պահում է իւր առասպելական բնաւորութիւնը, որով արեգական կամ աստղերի աստուած Բէլի դէմ կոռւում է մի աստղային դիւցազն Հայկ¹:

Ետապայում արդէն, եւհեմելարար մաածուելով, Բէլը մեր առասպելի մէջ զարձել է թագաւոր Բարելոնում (հաւանօրէն ու Գրքի աղդեցութեան տակ) և Հայկը՝ Հայ ազգի նախահայր, և նորա արարքները տեղափակուած են Վանայ լճի շուրջը: Խոկ թէ արդեօք Հայկը ժողովրդի զիտակցութեան մէջ է զարձած Հայոց նախահայր, թէ մի անհատի ստուգարանութիւն է այդ՝ Հայ և Հայկ բառ երի նմանութիւնից, և թէ արդեօք Բէլ անունը Հայոց առասպելի մէջ մտել է Հայերի՝ Ասորեսաանցոց ու Բարելարցոց հետ ունեցած յարաբերութեան յիշողութիւնից, թէ զա մի փոխառութիւն է միայն՝ Ուրարտացիներից կամ ուրիշներից, — այդ զժուար է որոշել այժմեան միջոցներով: Յամենայն դէպս, այդ առասպելի զբուելուց ի վեր առասպելական հսկայ ու որսորդ Հայկը փառաւորւում է իրեւ ազգային հերոս և Հայ ազգի նախահայր:

1. Պետք է նկատել, որ Հայկ համաստեղուրինը ուրդեալ յօդով է զործածում և սեռական ունենում է Հայկի և իսկ Հայկ, իրեւ դիւցազն, ու առենացու և թէ Ասանունի մէջ զործածուած է անյօդ և յօդով, ու հոյոված է թէ Հայկի և մեռակ:

Զ.

ԱՆԳԵԼ ՏՈՒՐՔԻ ԱՌԱՍՊՈԵԼԸ.

Անոնք: — Ո՞րն է այդ հսկայի անունը, Տուրք թէ Տորք, Մայր Աթոռի գրատան տասնութ ձեռագիրները (որոնցից մէկը վերջիրս հանգ, Սարգիս եպիսկոպոսից ժառանգութիւն է մնացած) աջքի առաջ ունենալով կարծում ենք, որ Տուրք պիտի լինի:

Անշուշտ Խորենացու ձեռագիրները դեռ չեն համեմատուած: և մենք զեռ չենք կարող բոլոր ձեռագիրների ճիշտ և վերջնական գառակարգութիւնն անել: Բայց Խորենացու ձեռագիրներով պարապոններին որդէն յայտնի է, որ Մայր Աթոռի ձեռագիրները երկու գլխաւոր տեսակի են բաժանւում, որ մենք անուանում ենք առաջինը՝ Անտիոքի (Ա. անսակ, իսկ երկրորդը՝ Տպագրի (Տ. Որովհետեւ առաջին տեսակից տպագրութիւն չէ եղել այլ միայն երկրորդ տեսակից:

Թէ Տ բոլոր 12 ձեռագիրները մի ընդհանուր ծագում ունին շատ գեղեցիկ կերպով երեսում է, ի միջի այլոց այն բանից, որ բոլորն ել Տուրքի հատուածի մէջ ունին տառասխալով ողեզութիւն: (№ 1666 դեղևութիւն, իսկ Սարգիս եպիսկոպոսինը գեղութիւն) բառը՝ մինչդեռ Ա. ձեռագիրներն ունին ուղիղ՝ զեղութիւն):¹ Այս բաժանուած, թէպէտ և մի տառասխալի վրայ հիմնուած, հաստատ կարելի է համարել: Սակայն, անշուշտ, մեր հիմունքը միայն այս տառասխալը չէ:

Արդ, Տուրք ձեն ունին բոլոր Ա. ձեռագիրները (№ № 616, 1665, 1669, 1671, 1672, 1686), և Տ. ձեռագիրներից երեքը (№ № 248, 1663, 1668): Ուրեմն 18. ից Կ. ու 9(6+3) ունին Տուրք:

Այս հանգամանքը, որ Տ. ձեռագիրներից եւ ելքքը Տուրք ունին, ստիպում է մեզ Տուրք

1. Վեհետեկի տպագրութիւնն ունի գեղութիւն, բայց ծանօթութեան մէջ յայտնած է անուոց կերպով: Ինչ եղանակ ունին յեղութիւն: Ետք նկատրինք ի իմանալ ու արդիօֆ տպագրի տեսակին պատրաստ մեռագիրներից մէկն ու մէկը զեղութիւն ունի: ու արդիօֆ տպագրութեան Ա. ձեռագրի վրայ ուղղած են դեղութիւն:

ընթերցուածն ընդունել: Որովհեակ այդ ոչ
պատահականութիւն կարող ենք համարել և
ոչ սրբազրութիւն մի Ա. ձեռապրի վրայ: Սրբ-
ապրութիւն չենք կարող համարել քանի որ
Տուքքի հատուածի մէջ հենց երկու տեսակի
ձեռագիրները շատ մեծ առբրերութիւններ
ունին իրարուց և եթէ Տ. տեսակի այս երեք
ձեռագիրները սրբազրուած լինեն Ա. ձեռա-
պրի վրայ անհաւանական է կարծել որ Տուքք
անուան մի - տառը միայն սրբազրուերը իսկ
մեացած այքի ընկող տարբերութիւններն ան-
փոփոխ թուղթուելին:

Թեթև չամեմառութիւնը միայն ցոյց
կըտայ մեզ այդ։ Մ'ենք Ա. խմբի տարրերու-
թիւնները միայն կարտագրենք.

II. 2tjflU9PbPvJbP

Sphingopus (*Siphonias*, 1881).

Բարձը կուպատարազ անմն
Ի Հայկայ ։
Տարք
Կոյէին անգեղեայ
Կամիս և սեմ վասն 2
Որպէս եւ պարսիկք վա-
սըն Ռոստոմայ Սազի ։
Փոյս ուժ ունել ասեն ։
Կարի աննմանազոյն բուհն
և Նմա երգ բանից վասն
ուժեղութեան և սրտեայ լի-
նելոյ, որք ոչ Սամսոնի և
Երակեայ և ոչ Սամինին
Յամանին այն զրոյցի։ 5

Աւր ոչ գեղութիւն
ձեղուն ։
Եղնզամբքն ։ ։ ։ Եղն-
զամբք ։

Բարձը և կուպատարան
Ի Հայկակայ
Տորք
Տայնին Անգեղեայ
Կամիս սեմ և և յաղաց
Որպէս պարսիկք վասն
Ռոստոմայ Սազի
Փոյս ոյժ ասեն ունել
Քանի կարի խմ անյաւմար
բուհն նմա երգ բանիցն
վասն ուժեղութեան և սրտ-
եայ լինելոյն, որուն ոչ
Սամսոնի և ոչ Երակեայ
և ոչ Սամինին յարմանն այս
զրոյցն։
Աւր ոչ գեղութիւն
ձեղուն ։
Եղնզամբքն ։ ։ ։ Եղն-
զամբք ։

4. № № 1665, 1671 Հայկա, № 616 անպիտառ սութեն (զերջի և տառը մոռացած).
 5. № 616 կամիս և սև սևան վասն նորա:
 6. № 616 Թըստոմայ, № 1665 Պարսիք, Աւտամայ:
 7. № 1665 Ճի փեղոյ № № 1669, 1686, 1672 ուժել ասեն, № 1671 ուժել բայց զինին ուն վանդալն աւելացրած է:
 8. № 1686 Սամիսանի, № 1665 սրտեա, Երեկուսա, Տաճկեա, զրուդք, № 1669 երգք, № 1671 սմանոյին:
 9. № 1665 Ճի դըսել.
 10. № 661 Կենդամբըն, եղենդամբըն, № 1671

Յէկեր ծովուն մէջի Պոն- Յէկերս ծովուն Պանդոսի տոսի ,	Թշնամեաց
Ի խաղալ . . . իր ասպա- Ի խաղալն . . . իրեւ առ րէսս ուրբուտան 2	պարէզս ուր
Ժամանեալ 3	Ժամանեաց
Բոյորաձևս	Բոյորաձևս
Ո . . . առասպելեաց 4	Ո՞ . . . առասպելաց
Այսպիսեաց արժանաւոր 5	Այսպիսեաց զրուցաց ար-
	ժամի

Արդ, №№ 248, 1663, 1668 պատկանում են Տաղագրի տեսակին, միայն փոքրիկ տարրերութիւններով, որոնք են.

№ № 248, 1663, 1668 ՏՊԱԳԻՐ (Տիկին, 1881)

Տուրբ	Տորբ
* Ժահաղիմութեան (ն բահաղիմութեանն բաց [թողած])	Ժահաղիմութեանն
* Անգեղայ (և բաց [թողած]) Անգեղեայ	
* Յերեսաց (և բաց [թողած]) Յերեսացն	
* փղաց	Փղոց
Աւժեղութեան (ն բաց Աւժեղութեանն թողած)	Աւժեղութեանն
* յարմարին	յարմարեն
զրոյցք (և բաց [թողած])	զրոյցքս
* գեղութիւն	գեղութիւն
(և բաց [թողած])	և ձեղքել
ասպարէսս	ասպարէզս
* առնուլ	առնուլ
* ալեաց (ն բաց [թողած])	ալեացն

Բացի այդ՝ առանձին տարբերութիւններ ունին։

Nº 248

Sphol. 1881.

* յարկեմնից	արկեմնից
* յորում՝	որում՝
* Երակ՝ կեայ	Երակլեայ
Եղնդամբը	Եղնդամբը

և զանգամբըն, և զենքամբն. № 1672 և զենքամբն (լուսանցքում ուղած՝ եղանգամբիքն), և զենքամբըն.

Ա. № 616 Եւ այլ այսպիսիս . . . յեզր. № 1671
Պոնդոսի. № 1672 մեծի ծովուն Պոնտոսի:

2. № 1665 ութուտասան. № 616 ասպարեզ,
5. № 616 ժամանել. № 1665 այս բառը. ի առ-

տառ մանէ(է), զերջի տառը բաց թողած.

№ 61612 аյլ և առասպելաց առասպելս, № 616 առասպելս այլ առասպել, № 1665 առաս-

պելաց. № 1671 և առասպելեաց այլ առասպել՝
5. № 1665 այսպիսեաց զրուցաց.

եղբնգամբք * իւրով (յ ըղընգամբք իւրովք
բաց թողած)

№ 1663

* Երակլ' եայ Երակլ' եայ

* Նաւ (ուց՝ աւելացրած Նաւաց

ուրիշի ձեռով):

Եղբնգամբք, Եղբնգամբք Եղբնգամբք, Եղբնգամբք

№ 1668

Սամփսոնի Սամփսոնի

Եղբնգամբք, Եղբնգամբք Եղբնգամբք, Եղբնգամբք

* Նաւուց Նաւաց

Այդ տարբերութիւններից աստղանիշները,
ինչպէս ընթերցողը կրտեսնէ, չեն կարող Ա.
ձեռագիրներից առաջացած լինել, քանի որ
չկան անոր մէջ: Դոքա մեծ մասամբ բաց թո-
ղած տառեր են, ինչպէս են նաև՝ ուժեղու-
թեան, զրոյցք բառերի վերջի նես որ և Տ.
տեսակի ուրիշ ձեռագիրների մէջ նոյնակէս կան
բաց թողած (ինչպէս՝ ուժեղութեան № 1666
և Սարգիս Եպիսկոպոսի): Խակ Սամփսոնի ձեռ
միայն երկու անգամ, մի Ա. և մի Տ. ձեռա-
գրի մէջ է պատահում որ և պատահակա-
նութիւն է անշուշտ՝ արտասանութիւնն
ազգեցութեան տակ առաջացած: Արտասանու-
թիւնից և առաջացած անշուշտ և եղնգամ (բ)ք
բառի գրութեան խառնաշփոթութիւնը. բայց
և եղնգամք, Եղնգամք (№ 1666, 1662, 615)
գտնում ենք նոյնակէս Տ. տեսակի մէջ, ուր և
Եղբնգամք, Եղբնգամք են:

Այսպէս Տ. տեսակին պատկանող երեք
ձեռագիրների սկզբնագիրը բնուած կարողէ Տուր-
քի հատուածի մէջ սրբազրուած լինել Ա. տե-
սակի ձեռագրի վրայ, որովհետեւ չենք կարող
ընդունել, որ սրբազրողն այնքան տարրերու-
թիւններից միայն Տուրք բառը սրբազրէր,
խակ մնացածներն անփոփոխ թողնէր: Պատա-
հականութիւն էլ չենք կարող համարել այդ,
որ բառի մէջ մի տառ աւելանար և յատկա-
պէս - տառը և կազմէր այդ անուան այն
ձեռ, որ կայ Ա. ձեռագիրների մէջ: Մանա-
ւանգ, որքան տառեր բաց թողնելը սովորա-
կան է, այնքան հազուագէպ տառ աւելացնելը:
Տուրք ձեռի ծագումն այդ երեք ձեռա-
գրի մէջ, ուրիշն ուրիշ տեղ պէտք է որոնել:

Այդ ձեռ գալիս է անշուշտ Տ. տեսակի
այն սկզբնագրից, որի մէջ թէպէտ և գեղու-
թիւն տառասխալը մտած էր: բայց զեռ Տուրք

ուներ: Արտագրողի մէկն ապա այդ և տառը
բաց է թողել, որով կազմուել է Տուրք ձեռը.
մինչդեռ Տուրք ձեռ Տ. տեսակի մի ուրիշ օ-
րինակի մէջ մնացել է անփափօխ: Եւ այսպէս
Տպաղրի կամ «Եղնգամքիւն» տեսակի ձեռա-
գիրները բաժանուել են երկու տեսակի, հե-
տեւեալ պատիերով:

X (Տուրք, Գեղութիւն)

X1

X

—

X2 (Տուրք, Գեղութիւն)

X3

S. ձեռագիրներ

Ա. ձեռագիրներ №№ 248, 1663,
(Տուրք, Գեղութիւն) 1668

Տ. Բան Խումք
(Տուրք, Գեղութիւն):

Անշուշտ այս բաժանումների մէջ ուրիշ մի-
ջին տասիճաններ էլ պէտք է հասկացու ին:
ինչպէս և Ա. և Տ. տեսակների ստորաբաժա-
նումներ:

ՈՒէ, երբ է Տուրք ձեռ Տուրք ձեռի փոխուել՝
չենք կարող ասել, բայց անուշագիր պիտի շր-
թողնել որ Համբրոնացու օրինակի մէջ ևս
Տուրք է, այլ և Ասողիի: Ուրեմն աւելի հին
օրինակների մէջ ևս Տուրք է:

Յօգուտ Տուրք ձեռի է վկայում և այն:
Հանգամանքը, որ Հայոց մէջ կայ Տուրք անուն-
օրինակ, յիշւումէ Բատենոյ հաբիսկոպոս Տուրք:
Սոյն իսկ Խորենացու պատմութեան մէջ
(Բ. Խէ) կայ Տուր անունը որից Տրունիք: Այդ
երկու անունը, Տուր և Տուրք, նոյնն ենք
համարում: Դա մի և նոյն տառը, տուրք հա-
ստրակ անունն է՝ շնորհ(ք), պարքէ(ք) իմաս-
տով (տուրք պարգեաց, տուրք և պարգեք,
տուր և շնորհ), որ իրրե յատուկ անուն է:
առնուած, ինչպէս անոր համանելը նոյնակէս՝
Պարգե և Ծնորհը իրրե յատուկ անուն գործ
ածուած գանում ենք: 2

ՈՒ. Խալաթեանը կասկածի է ենթարկում
Տուրք անուած հայերէն լինելը: Որովհեան
մտազրուած է ցոյց տալու Տուրքի տուասով-
ի շննծու լինելը: ուստի և «Հակամաշտ» և են-
թազրելու, թէ Խորենացին Տուրք անունը
վերցրել է Եւսեբիոսի Քրոնիկոնի մի բարչի տ-


¹ Խալաթ. Արմ. Թոօտ., և 328. բայց յէ յի-
շուած այլիւր, որից վեցուած է:

² Խորենացի Գ. ծ. Պարզեւ, Պարզեւայ Ամառունու:

նունից, որ յունարկենում Մոսքոս է, իսկ հայ ձեռագիրների մէջ, հաւանօրէն, աղջամամբ Տորբոս է դառել թայց այդ ենթադրութիւնը պ. Խալաթեանը ոչ մի բանի վրայ չէ շիմում: Նախ քան այդ Նա մեզ պէտք է ասեր թէ Խորենացին առասպել «արքելիս» ինչո՞ւ անպատճառ Եւսերիոսից մի անուն պիտի վերցնէր և հայացնելու համար ու վերջաւորութիւնը դուրս ձգեր: Մինչէ հայ անուններ պակասում էին նորան, և կամ ինքը կարող չէր որեւէ արմատից մի անուն շնել: Ասենք թէ Խորենացին անուն չէր գտնում և անպատճառ Եւսերիոսից էր կամենում վերցնել, բայց ապացուցել է պ. Խալաթեանը, որ Խորենացու ձեռի տակ եղած Եւսերիոսի օրինակի մէջ Մոսքոսն արդէն Տորբոս է դարձած եղել: Ասենք թէ սյուն էլ եղել էր: Բայց այն ժամանակ ապացուցել է արդեօք պ. Խալաթեանը թէ Խորենացու բնազրի մէջ Տորբ է եղել և ոչ Ցուրբ: Բայց այս ապացուցնելու մասին նա չէր էլ մասածիլ: Քանի որ նորան միայն Համբորոնացու օրինակն է յայտնի եղել Ցուրբ ձեռի, մէկ էլ Ասողինը:

(Եարունակութիւն)

Մ. Արեղեան.



ԱՅԼԵՒԱՅԼԻՔ

ԱԹՈՂՉԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԴՐ. Կ. ՌԻԿՈՎԱՄԻՒ.

Ա.

ՈՒՑԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ.

(Եարունակութիւն) *

Կերակրի բնուուրիւն. Սննդարար և գիւրամարս կերակութ ուտելիս մենք աւելիքի ենք ուտաւմ, քան երբ ուտումնեաք գժուարամարսը: Մարսութիւնն այն է, որ կերակութ ստամփոսի և աղքիների

մէջ փափկում է հիւթերի շնորհիւ և գառնում է արիւն: Քանի կերակութը հեշտութեամբ է մարսութ և ոքան աւելի նիւթեր է պարունակում, որ նպաստում են արիւն կազմելուն, այնքան նա աւելի գիւրամարս է և սննդարար: Քողովովն առազգ մարզը, եթէ միջակ աշխատող է և բաւականաչափ հանդստանում է, իւր քաղցնու ծարաւը յադեցնելու համար օրուան ընթացքում կերակութ պիտի ընդունի այն հաշուուլ, որ նորա 4/3 մինին պինդ նիւթեր (միաւ ձաւ, պանիր, հաց, բանջարեղին և իւղ), իսկ 4/3 կամ մինչն անդամ աւելին՝ ջրի (ջուր, կաթ, սուրճ, մսաշուր գաբեջուր և գինի):

Առազգութիւն պահպանելու համար պինդ կերակութը ըստ կարելոյն բազմատեսակ պիտի լինի. մէծ մասամբ գործ են ածում հաց և բուսեղին կերակութը իսկ դոցա վրայ աւելացնում են՝ հարկը պահանջած ժամանակ կամ հանդամանքներին նայելու, կենդանական թագաւորութիւնից աւելի գիւրամարս բաներ (պանիր, ձաւ, միաւ ճարպ կամ իւղ): Աերակութը համեզացնելու համար համեմում են աղով, պղպղեղով, մանանիսով և այլն ով ինչպէս ցանկանում է: [Ցիշեալ առարկաներից մարդու համար ամենից աւելի հարկաւորները նոքա են, որ նպաստում են մարմնի անձանը, վերագարձնում են աշխատութիւնից կորցրած նիւթը և վերջապէս կազմուածքի համար անհրաժեշտ չերմութիւնն են տալիս]:

Իռուսեղին կերակութն անհրաժեշտ է որովհետեւ միայն կենդանական կերակրով մենք չենք կարող ոյժ հաւաքել երկարատե և յոզնեցուցիչ աշխատանքի համար: բացի թերեւ այն գէպից: Եթէ շատ մէծ քանակութեամբ ուտենք այդ կերակրեց: Այս հանդամանքը առիթ է տուել կազմելու այն միանդամայն սխալ կարծիքը, թէ օգտակար է բացառապէս բուսեղէն կերակրով մնունք առնելը:

Բայց չպէտք է մոռանանք որ բուսակերները ծանրաթեռնում են իրենց կազմուածքը՝ չափազանց մէծ աշխատանք տակով իրենց ստամփուն ու աղքիներին որովհետեւ նոքա պէտք է աւելի մէծ քանակութեամբ կերակութ ուտենք, քան խառն կերակրով մնուղները: Այս յառաջ է գալիս նորանից, որ բուսեղին կերակրի մէջ եղած մննդարար նիւթերը կամ գժուարաւութեամբ են մարսութ կամ ընաւ չեն մարսութ մեր մարսողութեան գործարաններում, ուտելի երկար են մնում ստամփուն ու աղքիների մէջ և չեն տալիս այն օգուար, որ կարելի էր սպասել նոցանից: Անդամական կերակութն ընդհակառակը, հեշտութեամբ է մարսութ և տալիս է մեզ իւր մէջ եղած բոլոր մննդարար նիւթերը՝ բայց միայն ժամանակի երբ լաւ են պատրաստում և